600.0155.29.04.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2020 թվականի №155Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2019 թվականի սեպտեմբերի 18-ի №05/11.1/10294-2019, հոկտեմբերի 25-ի №03/11.1/11326-2019, դեկտեմբերի 10-ի №03/11.1/12264-2019 և 2020 թվականի մարտի 24-ի №03/11.1/1729-2020 գրություններով ներկայացված տեղեկություններն այն մասին, որ անհատ ձեռնարկատեր Սարգիս Վարդանի Գրիգորյանն առանց թույլտվության օգտագործում է 156.225 ՄՀց ռադիոհաճախականությունը,

բ) վերոնշյալ №05/11.1/10294-2019 գրությամբ ներկայացված՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի հուլիսի 29-ի՝ առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործման հետազոտությունների արդյունքների №0502 ակտը, որը անհատ ձեռնարկատեր Սարգիս Վարդանի Գրիգորյանը հրաժարվել է ստորագրել,

գ) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 26-ի №ՍԾ/34.2-Մ2-9/1111-20 գրությամբ անհատ ձեռնարկատեր Սարգիս Վարդանի Գրիգորյանը ծանուցվել է առանց թույլտվության բազային ռադիոկայանի շահագործման վերաբերյալ,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Անհատ ձեռնարկատեր Սարգիս Վարդանի Գրիգորյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 156.225ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատեր Սարգիս Վարդանի Գրիգորյանն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սարգիս Վարդանի Գրիգորյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
29 ապրիլի 2020թ.